Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

24896

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ IV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1926 Թ. ԱՊՐԻԼԻ 25—29

## ԲԱՆԱՁԵՎԵՐ ՅԵՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՅԵՐԵՎԱՆ—1926 Թ.
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԽ-Ի № 49

331.88(47.925)
2-24

03 JUN 2013

331.88 (47.925)
Z-24

15 JAN 2010

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
# IV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

**1926 Թ. ԱՊՐԻԼԻ 25—29**

## ԲԱՆԱՁԵՎԵՐ ՅԵՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI--1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՅԵՐԵՎԱՆ—1926 Թ.
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԽ № -Ի49

24896

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառեպվար 675 բ. Պատվեր 3404 Տիրաժ 500

## ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱՄԽԻ հաշվետու զեկուցումը (ԿՈՒՋՆԵՑՈՎ)
2. Վերստուգիչ Հանձնաժողովի զեկուցումը (Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ)
3. Աշխժողկոմատի զեկուցումը (Խ. ՀՈՎՍԵՓՅԱՆ)
4. Զեկուցում Հայաստանի արդյունաբերության դրության և հեռանկարների մասին. (Հ. ՊՈՂՈՍՅԱՆ)
5. Բանաձևերի քննություն և ընդունելություն.
6. Ընտրություններ ՀԱՄԽ-ի և Վերստուգիչ Հանձնաժողովի:

# ԲԱՆԱՁԵՎԵՐ ՈՒ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ

## ՀԱՄԽ-Ի ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Արհմիությունների Համահայաստանյան 4-րդ Համագումարը լսելով ՀԱՄԽ-ի գործունեության մասին արված զեկուցումը՝ ՀԱՄԽ-ի գործունեությունը գտավ բավարար և վարած գիծն ուղիղ։*

## ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Արհմիությունների Համահայաստանյան 4-րդ Համագումարը լսելով վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումը՝ հաստատեց այդպիսին։*

## ԱՇԽԺՈՂԿՈՄԱՏԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Արհմիությունների Համահայաստանյան 4-րդ Համագումարը լսելով Աշխժողկոմատի զեկուցումը՝ գտավ Աշխժողկոմատի գործունեությունը բավարար և վարած գիծն ուղիղ։*

---

## ԲԱՆԱՁԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընդգծելով պրոֆմիությունների անդամների թվական զգալի աճումը (գլխավորապես ի հաշիվ արդյունաբերական միությունների ռեզերվների) և միաժամանակ բանվորների ու ծառայողների նորանոր խավերի շարունակվող հոսանքը դեպի ձեռնարկությունները՝ համագումարը կազմ-աշխատանքի առաջնակարգ խնդիրներից մեկը համարում է՝ իր ժամանակին այդ խավերի ընդգրկումը միությունների մեջ և նրանց լիակատար սպասարկման ու շահերի պաշտպանման անհրաժեշտությունը: Միաժամանակ պրոֆմիությունների հին անդամների պահանջների բավարարումը, նրանց ակտիվության արծարծումը, համաձայն պրոֆմիութենական դեմոկրատիայի հիմունքների, հաստատականապես պահանջում են մասսայական աշխատանքի հետագա աշխուժացում, միությունական բջիջների լիակատար ու կայուն ղեկավարություն և ընտրված աշխատավորների պատասխանատվության ու միության անդամների առաջ հաշվետվության ուժեղացում:

Վերոհիշյալը իրականացնելու համար, համագումարը հանձնարարում է ՀԱՄԽ-ին կատարելու հետևյալը.

1. Կարգավորել բանվորների ու ծառայողների նոր խավեր միությունների մեջ քաշելու գործը՝ վերացնելով անհամաչափությունը աշխատավորների թվական աճման և միության կողմից ընդգրկված անդամների միջև՝ միջոցներ ձեռք առնելով նրանց դաստիարակելու և միությունական աշխատանքների մեջ քաշելու:

2. Իր ժամանակին պահանջների լիակատար սպասարկման, կարիքների բավարարման ու միութենական ապարատը միության անդամներին մոտեցնելու միջոցով—անց կացնել մասսայական աշխատանքի հետագա աշխուժացումը՝ գործարկոմ—տեղկոմներ կազմակերպելով բոլոր ձեռնարկություններում ու հիմնարկներում, որ աշխատում են 25 հոգի (վորոնք տարածությամբ իրար մոտ են գտնվում) և միայն միայնակներին ու մանր ձեռնարկների ու հիմնարկների աշխատավորներին սպասարկելու համար հնարավոր համարել խմբկոմների կազմակերպումը:

3. Ավելի ուշադրություն դարձնել սեզոնային բանվորների սպասարկմանը և, սեզոնը վերջացնելուց հետո էլ, նրանց հետ կապ պահպանելուն:

4. Միջոցներ ձեռք առնել գործարկոմ-տեղկոմների աշխատանքները հեշտացնելու և նրանց ազատելու իրենց չվերաբերվող ֆունկցիաներից՝ (զանազան վկայականներ, տեղեկանքներ տալը և այլն) թույլատրելով նրանց կից կազմակերպել միայն հետևյալ յերեք հանձնաժողովը—կուլտ-կրթական, աշխատանքի պաշտպանության և արտադրական:

5. Անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել միությունական ակտիվի դաստիարակման, պատրաստման ու առաջ քաշելու գործի համար՝ նույնպես և ազգային փոքրամասնությունների միջից:

6. Վերանայել միջմիությունական շրջքարտուղարությունների ցանցը՝ այդպիսիների քանակը կրճատելու և նրանց աշխատանքները կանոնավորելու տեսակետից՝ թույլատրելով միջմիութենական շրջքարտուղարությունների կազմակերպումը այն դեպքում, յերբ շրջանում առնվազն յերեք միություններ ունեն 500-ից վոչ պակաս անդամներ:

7. Համաձայն Համ. Արհմխորհի 3-րդ պլենումի միությունների գյուղում տարվելիք աշխատանքների մասին կայացրած վորոշման, ձեռք առնել մի շարք գործնական միջոցներ՝ ուղղված գյուղանտառ միության ամրացմանը:

8. Ուժեղացնել ՀԱՄԽ-ի պլենումների դերը, վորպես համագումարից համագումար ղեկավարող որգանի, պարբերաբար 4 ամիսը մեկ անգամ հրավիրելով այդպիսին և պրոֆ-որգանների աշխատանքների հետ կապված կարևորագույն խնդիրները դնել նրա քննությանը:

9. Ուժեղացնել ղեկավարությունը գավառական պրոֆորգանների գործունեության նկատմամբ՝ կատարելով լայն հետազոտում և տալով լրիվ հրահանգներ, հատուկ ուշադրություն դարձնելով թե ինչպես են դրված աշխատանքները և ինչպես են կատարվում բարձրագույն որգանների վորոշումները:

10. Նախագահության կողմից քննվելիք հատուկ սկզբունքային հարցերի նախնական մշակման համար համապատասխան բաժիններին կից ավելի կանոնավոր հրավիրել կենտ. վարչությունների նախագահների և քարտուղարների խորհրդակցություններ:

11. Վերացնել զանազան ներկայացուցչությունների սխալը, աշխատելով այդպիսիների թիվը հասցնել անհրաժեշտ մինիմումի՝ «ներկայացուցչությունը հանդիսանում է միությունների իրավունքը և վոչ թե պարտականությունը» ֆորմուլայի հիման վրա:

12. Խորացնել և կանոնավորել աշխատանքները կանանց մեջ՝ մասնավորապես ուշադրություն դարձնելով կանանց գործնական պրոֆ-աշխատանքի մեջ առաջ քաշելու վրա:

13. Ուժեղացնել կապը պրոֆ-որգանների և ԼԿՅԵՄ-ի միջև՝ աշխատելով բոլոր միություններում հնարավորության սահմաններում անց կացնել վորպես մշտական ազատված աշխատողներ ԼԿՅԵՄ-ի ներկայացուցիչներից:

14. Ավելի ուշադրություն դարձնել ուսանողական պրոֆսեկցիաների և գործկոմների աշխատանքների ղեկավարմանը:

15. Անցկացնել ճարտարապետների և տեխնիկների սեկցիաների կազմակերպումը Կենտ. Վարչություններին և Գավարհբյուրոներին կից, վորտեղ բավականաչափ ճարտարապետներ և տեխնիկներ կան, իսկ որտեղ գոյություն ունեցող Ճ. Տ. Ս.-ի որգաններում խորացնել աշխատանքը:

Դրա հետ միասին անհրաժեշտ է մտցնել խիստ խնայողության ռեժիմ և վարչության ու Վերստուգիչ Հանձնաժողովի անդամների պատասխանատվություն՝ միութենական կարգով յերևան հանված յուրացումների համար, յերբ յուրացումներն առաջացել են իր ժամանակին ստուգումներ չկատարելու և վարչության անտարբերության պատճառով:

16. Ավելի մեծ ուշադրություն դարձնել պրոֆկազմակերպությունների ֆինանսական աշխատանքների վրա, վորի համար

ա) աշխատել կրճատել ապարատի վարչա-տնտեսական ծախսերը.

բ) բարելավել ֆինանսական գործավարությունը և հաշվետվությունը՝ լիակատար հնարավորություն ստեղծելով միութենական լայն մասսաների վերահսկողության համար.

գ) սահմանափակել միութենական միջոցների անհատական կարգադրումը.

դ) լավացնել ու կարգավորել վերստուգիչ հանձնաժողովի գործունեությունը և ֆոնդերի միջոցների ծախսման վերահսկողությունը:

17. Նպատակ ունենալով փոխադարձ ոգնության գանձարկղի անդամներին չհապաղելը, անհրաժեշտ է այնպիսի կարգ սահմանել, վոր հեռանալու դեպքում մուծած գումարների վորոշ տոկոս վերադարձվի, և պատասխանատվություն սահմանել՝ պարտք վերցրած գումարն իր ժամանակին չվերադարձնելու համար: Փոխադարձ ոգնության գանձարկղի բյուրոներին վերապահել ինքնուրույնություն՝ ապահովելով նրանց պրոֆ-որգանների միջամտությունից:

## ԿՈՒԼՏ-ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Բանվոր—աշխատավորական մասսաների տնտեսական դրության բարելավման հետ աճել է նրանց ակտիվությունը, բարձրացել են կուլտուրական պահանջները: Դրան համընթաց, 3-րդ համագումարից մինչև 4-րդը, արհմիությունների կուլտ-կրթական աշխատանքներն ընդարձակվել են, ավելի բազմազանակային դարձել: Անհրաժեշտ է լայն կերպով ոգտագործել մասսաների ակտիվությունն ու ինքնագործունեությունը, և բավարարել միութենական մասսայի զարգացող պահանջները:

2. Կուլտ-աշխատանքների զարգացումը մեծապես կախված է նյութական միջոցներից. չպետք է թույլ տալ կուլտ-տոկոսների հետագա կրճատում, պետք աշխատել միութենական մյուս ֆոնդերից բաց հնարավորին չափ հատկացումներ կատարել և կուլտ-ֆոնդերը պետք ծախսել միայն նախահաշվային կարգով ու խնայողությամբ:

3. Կուլտ-աշխատանքների հետագա զարգացումը կախված է արհմիությունների կուլտ-կոմիսիաների աշխատանքների ուժեղացումից: Ուշադրության կենտրոնում պետք դնել կուլտ-կոմիսիաների աշխատանքը, ամրացնել նրանց կազմը և ուժեղացնել ղեկավարությունը:

4. Կուլտ-աշխատանքների ղեկավարման ուժեղացման տեսակետից անհրաժեշտ է՝

ա) Պարբերաբար հրավիրել Կենտ. Վարչությունների կուլտ-խորհրդակցություններ:

բ) Հրավիրել Համահայաստանյան կուլտ-խորհրդակցություններ:

գ) Կենտ. Վարչությունների գծով հրավիրել կուլտ-հանձնաժողովների պարբերական խորհրդակցություններ:

դ) Կանոնավորել կուլտ-աշխատանքների հետազոտումը:

### ՀԱՇՎԱՌՈՒՄ

5. Կուլտ-աշխատանքի հաշվառումը պետք կարգավորել. մշակել միաձև, պարզ, հեշտ կիրառելի ձևեր և հաշվի առնել՝ ընթացիկ աշխատանքն ու մասսաների պահանջը, ծրագրային աշխատանքի կատարումը, աշխատանքի փորձի ընդհանրացումը:

### ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

6. Նկատի ունենալով, վոր արհմիությունների կուլտ-կրթական աշխատանքների կենտրոնները ակումբներն ու կարմիր անկյուններն են, անհրաժեշտ է՝

ա) Ակումբային ամբողջ աշխատանքը կառուցել անդամների ինքնագործունեության և ակտիվության հիմունքներով:

բ) Ուժեղացնել արհմիության անդամների ու նրանց ընտանիքների նորանոր կադրեր ակումբները գրավելու գործը՝ մաքսիմում առավելություններ տալով ակումբի անդամներին, վոչ անդամների նկատմամբ:

գ) Ակումբային աշխատանքը կառուցել բանվորական լայն դեմոկրատիայի հիմունքներով:

դ) Մասսայական աշխատանքը կառուցել բանվորների պահանջների լրիվ հաշվառման և տեղական բոլոր ուժերի ոգտագործման հիմունքներով:

ե) Ակումբի աշխատանքները դարձնել բազմակողմանի, վորպեսզի կարելի լինի բավարարել նաև հասակավոր բանվորներին, տալ նրանց հանգիստ, պրոֆ և քաղ կրթություն:

զ) Կրճատել, մինիմումի հասցնել կամպանիաները:

ե) Կարմիր անկյուններ կազմակերպել համապատասխան պայմաններ լինելու դեպքում։

## ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

7. Ակումբների գեղարվեստական աշխատանքը պետք է ընթանա յերկու ուղղությամբ՝

ա) ներկայացումները դարձնել գեղարվեստական, գաղափարապես բարձր,

բ) գրական-գեղարվեստական պատրաստություն տալ մասսային (դասախոսություն, զրույցներ, ցուցահանդեսներ, գրական-քննադատ. յերեկոներ)—և խմբակների անդամներին։

Այս ուղղությամբ էլ պետք է զարգացնել՝ դրամատիկական, յերգ-յերաժշտական, գրական, նկարչական և կենդանի լրագրի խմբակների աշխատանքները։

8. Ակումբային խմբակները չպետք է լինեն անվանական. պետք է ունենալ քիչ խմբակներ, բայց կենսունակ, մասսայական աշխատանքին ծառայող։

## ԿԻՆՈ

9. Արհմիութենական կինոներին տեղերում հարուցվող արգելքները անհրաժեշտ է վերացնել։

10. Կինո-լենտերի մատակարարումը և գները կարգավորել։

## ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

11. Գրադարանային աշխատանքը պետք է ուժեղացվի։ Գրադարանները պետք է գործեն 3 հիմնական ուղղությամբ՝ ա) Կենտրոնական՝ ՀԱՄԽ-ին կից, բ) ստացիոնար (բանակումբներին կից) և գ) շարժական գրադարաններ, վոր ծառայելու յեն կարմիր անկյուններին ու կոլեկտիվներին։

## ՊՐՈՖԿՐԹՈՒԹՅՈՒՆ

12 Տեղկոմական ու գավառական աշխատողների համար բանալ դասընթացքներ։ Բաղլուսավարի հետ միասին բանալ ակումբային աշխատողների դասընթացքներ։

13. Հատուկ ուշադրություն դարձնել՝ ա) մասսայական պրոֆդաստիարակման (պրոֆ-յերեկոներ, հարց ու պատասխանի յերեկոներ, դատավարություններ, պրոֆդատեր, պրոֆանկյուններ, պրոֆ-խաղեր) և բ) պրոֆ-ինքնազարգացման վրա (խմբակներ, ինքնազարգացում և այլն)։

## ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

14. Ընդգծելով հրատարակչական աշխատանքների նշանակալից հաջողությունը՝ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել, վորպեսզի հետագա հրատարակությունները լինեն՝ հանրամատչելի և եժան։

Հրատարակել «Աշխատանք» թերթը՝ միությունների նյութական ոժանդակությամբ։

## ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ

15. Ֆիզկուլտուրան անհրաժեշտ չափով չի զարգացել։ Այսուհետև պետք է հատուկ ուշադրություն դարձնել արհմիությունների անդամների ֆիզկուլտի վրա։ Վոչ միայն ակումբներին ու կարմիր անկյուններին կից պետք է կազմակերպել ֆիզ-կուլտի խմբակներ, այլ և խոշոր կոլեկտիվներում։

## ՊՐՈՖ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

16. Նյութական միջոցների սղության և թույլ ղեկավարության պատճառով, պրոֆ-տեխնիկական կրթության գործը շատ է հետ մնացել։ Պետք է ուժեղացնել արհ-լուսավարչությունը, ստեղծել ֆինանսական բազա և ամուր հիմքերի վրա դնել բանվորական վորակյալ ուժերի պատրաստման գործը։

## ԿՈՒԼՏ-ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Հարկավոր ուշադրություն չի դարձված գյուղի աշխատանքներին։ Անհրաժեշտ է ուժեղացնել արհմիությունների ղեկավարությունը, նյութապես աջակցել և ոգնել Գյուղանտառին։

17. Գյուղի կուլտ-աշխատանքները պետք է կենտրոնացնել խրճիթ-ընթերցարաններում և գործնականապես բարձրացնել դրանց աշխատանքները։

18. Կուլտ-աշխատանքը մանուկների և ուսանողության մեջ անհրաժեշտ է ուժեղացնել՝ միաժամանակ նրանց կապելով միութենական կուլտ-աշխատանքներին և ոգտագործել նրանց ուժերը։

19. Միութենական կուլտ-ֆոնդերի կրճատման պատճառով արհմիությունները հնարավորություն չունեն այսուհետև զբաղվելու անգրագիտության և կիսագրագիտության վերացման գործով։ Անհրաժեշտ է այդ գործը ամբողջովին հանձնել Բաղլուսավարին, կազմակերպչական և հնարավոր ոժանդակություն ցույց տալ։

## ԲԱՆԱՁԵՎ ՏԱՐԻՖ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

1. Յերրորդ համագումարից մինչև չորրորդ համագումարը Հայաստանի պրոֆմիությունների տարիֆային քաղաքականությունը հաջողեցրել է մի շարք անկասկածելի նվաճումներ, վորոնք հիմնականում կայանում են հետևյալում.

ա) Համարժեքի գործակիցների ճիշտ կիրառումը հետամնաց խմբակներում աշխատավարձի բարձրացման մասին։

բ) Միութենական մասսաների համեմատաբար լայն մասնակցությունը հավաքական պայմանագրերի քննության ժամանակ:

գ) Հավաքական պայմանագրերով ընդգրկվածների թվի զգալիորեն ավելանալը:

դ) Արդյունաբերական յերկաթուղային և այլ խմբակցությունների աշխատավարձի բարձրացումը մինչև հնարավոր չափի ներկա պայմաններում:

2. Աշխատավարձի քաղաքականությունը մոտիկ ժամանակաշրջանում պիտի կայանա գլխավորապես արդեն հասած աշխատավարձի չափերի ամրացման մեջ: Միաժամանակ, աշխատավարձի չափերի բարձրացումն ավելի հետամնաց արդյունաբերական ճյուղերում և այլ խմբակցություններում, ինչպես անցյալում, պիտի պահպանի իր նշանակությունը, սակայն վերջինս՝ տնտեսական նվաճումների և հնարավորությունների սահմաններում:

3. Ընդգծելով հավաքական պայմանագրերի պայմանների մասսայական քննության ասպարեզում ունեցած նվաճումները՝ անհրաժեշտ համարել, հետագայում էլ ավելի ուժեղացնել միութենական մասսաների ինֆորմացիան տնտեսական մարմինների հետ տարվելիք բանակցությունների, հավաքական պայմանագրերում տեղի ունեցած բոլոր փոփոխությունների և նրանց պատճառների մասին:

4. Հայաստանի արդյունաբերության ուրույն պայմանները հնարավորություն չեն տալիս ամենուրեք աշխատավարձի գործարքային ձևը մտցնել: Վորտեղ էլ այդ ձևն արդեն մտցրած է, աշխատանքի արտադրողականության բարձրացման և բանվորների տնտեսական դրության բարելավման ասպարեզում խոշոր դեր է խաղացել: Ելնելով դրանից, անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել գործարքային ձևն անց կացնել այնտեղ, ուր հնարավոր է և մինչև այժմ չի մտցրված:

5. Աշխատանքի նորմաներն ու գնահատումը պիտի սահմանվեն յերկարատև ժամկետով (մինչև կնքված հավաքական պայմանագրի ժամկետի լրանալը). մինչև ժամկետի լրանալը հնարավոր է այդպիսին վերանայել, միայն այն դեպքում, յեթե տեղի յեն ունեցել հիմնական փոփոխություններ՝ կամ աշխատանքի ձևի կամ հում նյութերի մեջ:

6. Գործարքով աշխատողների և նրանց սպասարկող օժանդակ բանվորների աշխատավարձի անհամաչափությունը վերացնելու նպատակով անհրաժեշտ է ամենուրեք, գործարքով աշխատողների հավելյալ աշխատավարձի հետ զուգընթացաբար, ձգտել լրացուցիչ վարձատրման, նաև օժանդակ բանվորների համար, վորոնց թվում նաև շինարարական ասպարեզում աշխատողներինը:

Նույն նպատակով վորակյալ և վոչ վորակյալ բանվորների նկատմամբ պահպանել Համարմխորհի միասնական տարիֆային ցանցը՝ ընդարձակելով այդպիսին բանվորական մասում մինչև 10-րդ կարգը ներառյալ, սահմանելով հարաբերությունը 1:4:



7. Մասնագետներին վարձաչափի միասնակ ձևով ընդգրկելու և նրանց աշխատավարձը կարգավորելու նպատակով անհրաժեշտ համարել վարչա-տեխնիկական կազմի համար հատուկ տարիֆային ցանցի սահմանումը:

8. Ակտիվ մասնակցություն ունենալ աշխատավարձի ու պաշտոնաչափի կարգավորման պետական աշխատանքներին, (унификация), աշխատանքի հրավիրելով համապատասխան կենտրոնական վարչությունների ներկայացուցիչներին: Այդ աշխատանքը վերջացնել այնպիսի հաշվով, վորպեսզի հնարավոր լինի կարգավորումն անցկացնել 1926–27 թվին: Միաժամանակ անհրաժեշտ համարել տեղական բյուջեյում գտնված հիմնարկների նկատմամբ նույնպես կարգավորումն անցկացնելը: Աշխատավարձի կարգավորմամբ չպիտի պակասի գոյություն ունեցող աշխատավարձը:

9. Շնորհիվ գյուղական տնտեսության մեջ վարձու աշխատանքի ուժեղ աճման, լուրջ ուշադրություն դարձնել գյուղում օժանդակ վարձու աշխատանքի ժամանակավոր կանոնների լրիվ անցկացնելու վրա՝ հաշվի առնելով վարձու աշխատանք կիրառող տնտեսությունների ունակությունն ու տիպը:

10. Հատուկ ուշադրություն դարձնել գյուղում աշխատողների (բժիշկ, ուսուցիչ, գյուղատնտես) աշխատավարձի կարգավորման վրա և հետևել, վոր աշխատավարձի ֆոնդերը ծախսվեն իրենց նպատակի համար:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

11. Միությունները պիտի ակտիվ մասնակցություն ունենան պետական ու տեղական բյուջեների մշակման աշխատանքներին՝ հատուկ ուշադրություն դարձնելով պետական ու տեղական բյուջեյով անցնող հիմնարկների աշխատավորների աշխատավարձի հնարավոր հավելման համար աղբյուրներ գտնելու վրա:

12. Արձանագրելով, վոր պրոֆ-օրգանների արտադրական-տնտեսական աշխատանքները հաճախ ծրագրային բնույթ չեն կրում, անհրաժեշտ է մոտիկ ապագայում այդ ասպարեզում աշխատանքի մեթոդներն ավելի ճշտել և բարելավել, ձգտելով բավականաչափ իրազեկ լինելու տնտեսության և մասնակցելու ծրագրերի քննությանը—ստորին պրոֆ-օրգաններից մինչև վերինը և դնել տնտեսական աշխատանքի հաշվառում:

Աշխատանքի արտադրողականության բարձրացման և արտադրական աշխատանքները բարելավելու համար տնտմարմինների կողմից ձեռք առած միջոցներին աջակցելը պետք է վորոշակի դառնալ պրոֆ-կազմակերպությունների հիմնական խնդիրներից՝—միութենական մասսաների տնտեսական շահերի պաշտպանումը: Միաժամանակ, պիտի վճռականապես խուսափել տնտմարմինների ձեռք առած բոլոր միջոցները պաշտպանելուց՝ առանց ստուգելու նրանց նպատակահարմարությունը:

13. Շնորհիվ այն հանգամանքի, վոր տնտմարմիններից վոմանք հաճախ չեն կատարում արտադրական հանձնաժողովների և խորհրդակցությունների վորոշումներն ու առաջարկությունները, իսկ մյուս կողմից էլ միութենական կազմակերպությունները բավականաչափ չեն ղեկավարում նրանց աշխատանքները, արտադրական հանձնաժողովների և խորհրդակցությունների աշխատանքները զգալիորեն թուլացել են:

Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել ուժեղացնելու նրանց ինքնագործունեությունը, մտցնել ծրագրային աշխատանք, կատարել աշխատանքի հաշվառում և պարբերաբար ժողովներ հրավիրել: Միաժամանակ միությունական կազմակերպությունների կողմից պիտի ուժեղացնել ղեկավարությունը արտադրական հանձնաժողովների ու խորհրդակցությունների նկատմամբ ու պիտի միջոցներ ձեռք առնել, վոր տնտմարմինները ավելի ուշադիր վերաբերմունք ցույց տան: Պետք է արտադրական խորհրդակցությունների աշխատանքներին մասնակից անել բանվորներին ու մասնագետներին կամավոր կերպով: Անհրաժեշտ է ավելի ճշտել Բ. Գ. Տ. օրգանների և պրոֆ-կազմակերպությունների փոխհարաբերությունները:

## ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ

14. Միության անդամների համար գավառներում և առաջին հերթին Լենյերկշրջկոմում ու Ալլահվերդում (Լոռի-Փամբակ) պիտի կազմակերպել իրավաբանական ոգնություն՝ կամավոր սկզբունքով աշխատանքի քաշելով իրավաբաններին և պրակտիկանտ-բանվորներին:

## ԳՆԱՀԱՏՈՒ ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

15. Ավելի ուշադրություն դարձնել Գ. Կ. Հ. աշխատանքներին և ձգտել վերաքննել գոյություն ունեցող կանոնադրությունը Գ. Կ. Հ. մասին: Գ. Կ. Հ. բանվորական մասի նկատմամբ ուժեղացնել ղեկավարությունը պրոֆ-կազմակերպությունների կողմից, վճռականապես պայքարել նրանց վարչական օրգանների վերածելու փորձի դեմ և պարբերաբար հրավիրել Գ. Կ. Հ. բանվորական մասի հրահանգչական կոնֆերենցիաներ՝ ծանոթանալու աշխատանքի որենսդրության և նրա գործնական կիրառման հետ: Ապակենտրոնացնել մի շարք ձեռնարկներ ընդգրկող շրջանային Գ. Կ. Հ. և կազմակերպել այդպիսին յուրաքանչյուր ձեռնարկում առանձին-առանձին:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

16. Շնորհիվ դժբախտ դեպքերի ավելանալուն և նախորոք աշխատանքի պաշտպանության որենսդրությունը բավականաչափ չանցկացնելուն, անհրաժեշտ համարել աշխուժացնել աշխատանքի պաշտպանության հանձնաժողովների աշխատանքները և ուժեղացնել կապը աշխտեսչության հետ: Հավաքական պայմանագրերի մեջ կետ մտցնել վորոշ ժամանակամիջոցում վերացնել խոշոր սանիտարական—տեխնիկական պակասությունները:



## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

17. Թոշակների ու նպաստների չափը բարձրացնելը պահանջում է միութենական և ապահովագրական մարմիններից մաքսիմալ տնտեսում ապահովագրական միջոցների, բայց միաժամանակ պիտի պահպանել հանգստյան տների ու սանատորական ոգնության անցյալ տարվա նորմաները: Անհրաժեշտ է բարելավել ապահովագրվածներին ցույց տրվելիք բժշկական ոգնության գործը, պարզելով միաժամանակ ֆինանսական փոխհարաբերությունները ապահովագրական և առողջապահական մարմինների միջև: Հետևել, վոր կյանքի մեջ ճշտորեն անցկացվի գործող կանոնադրությունը՝ սեզոնային և ժամանակավոր բանվորների ապահովագրման մասին: Միջոցներ ձեռք առնել, վոր պետ և տնտմարմինները լիկվիդացիայի ենթարկեն իրենց պարտքը Սոցապդանձարկղներին և ժամանակին մուծեն սոցապ. մուծումները:

## ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ.

18. Աշխատանքի բորսայում ցուցակագրված գործազուրկներն ըստ իրենց կազմի, մեծ մասամբ հանդիսանում են վոչ վորակյալ, վորոնց թվում կան բավականին կանայք և անչափահասներ: Գործազրկությունը մեղմացնելու համար անհրաժեշտ է անցկացնել հետևյալ միջոցները. գործազուրկների վորակավորում, անչափահասներին պատրաստել և գոյություն ունեցող աշխկոլեկտիվների ուժեղացում ու նորերի կազմակերպում և հասարակական աշխատանքների կազմակերպում: Վորակավորումն լավացնելու անհրաժեշտությունն առաջ է գալիս վորակյալ բանվորական ուժի բացակայությամբ: Այդ նույն նպատակով անհրաժեշտ է ձգտել բրոնի սահմանված տոկոսն անցկացնել լրիվ չափով, շինարարական աշխատանքների սեզոնում ավելացնել բրոնի չափը և փոխադրել բրոնից հասակավորներին, ամրացնելով նրանց մշտական աշխատանքի: Միաժամանակ անհրաժեշտ է ուժեղացնել աշխատանքի բորսաների միջնորդական գործունեությունը, իսկ պրոֆ-կազմակերպությունները պիտի բոլորովին հրաժարվեն միջնորդի ծառայություններից այնտեղ, վորտեղ կան աշխատանքի բորսաներ:

## ԲԱՆԿՈՈՊԵՐԱՑԻԱ

19. Կենսամթերքների և առաջին հերթին անհրաժեշտ ապրանքների գների աճումը կասեցնելու գործում հսկայական դեր է խաղում բանկոոպերացիան՝ ռեալիզացիայի ենթարկելով բանվորների բյուջեյի զգալի մասը: Անհրաժեշտ քանակության արդյունաբերական ապրանք-

ների բացակայությունը և գյուղատնտեսական մթերքների գների աճումն ի նկատի ունենալով՝ անհրաժեշտ է, վոր պրոֆկազմակերպություններն ուժեղացնեն իրենց մասնակցությունը Բանկոոպերացիային՝ աշխուժություն դարձնելով միութենական լայն մասսաների պահանջների սպասարկմանը, փայավճարից գոյացող դրամագլխի ավելացմանը, կենսամթերքների և առաջին հերթին անհրաժեշտ ապրանքների էժանացմանը, վերադիր ծախքերի կրճատմանը և հասարակական սննդի ցանցի ուժեղացմանը և բարելավմանն ըստ վորակի ու կարգավորել մանր վարկավորման խնդիրը:

Անհրաժեշտ է կազմակերպել բանվորական կոոպերատիվ Ղաթարում (Զանգեզուր) և աշխուժություն դարձնել այն գավառական կոոպերատիվներին, վորոնք մեծ մասամբ սպասարկում են բանվորներին ու ծառայողներին: Հարց դնել Հայկոոպին կից կազմակերպելու բանվորական սեկցիա:

## ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.

20. Ի նկատի ունենալով Հայաստանի բանվորների բնակարանային ծանր պայմանները, անհրաժեշտ է ձգտել, վոր ավելացնեն վարկերի չափը, բանվորական բնակարանային շինարարության համար և թեթևացնել վարկի պայմանները:

Շնորհիվ արդյունաբերության բարգավաճման ու բանվորական նոր խավերի հոսանքին և դրա հետ կապված զգացվող սուր կարիքի բնակելի տարածության, պետք է ձգտել տնտմարմինների արտադրական ծրագրերի մեջ մտցնել վորոշ գումարի հատկացում բնակարանային շինարարության համար, կապելով այդպիսին արդյունաբերության լայնացման և բանվորական նոր խավերի հոսանքի հետ:

Ուժեղացնել և ամրացնել գոյություն ունեցող բանվորական բնակարանային շինարարության կոոպերատիվ ընկերությունները և ավելացնել նրանց մեջ բանվորների կազմը:

# ԲԱՆԱՁԵՎ Հ.Խ.Ս.Հ. ԱՇԽԺՈՂԿՈՄԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

## 1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

Թեև Հայաստանում դրաղված բանվորական ուժի քանակը աճում է, կլանելով արդյունաբերական գործազուրկ բանվորներին, սակայն գյուղերից, Արտասահմանից յեկողների ինչպես և մանկատներից արձակվող հասունացած վորբերի և Կարմիր բանակից արձակվածների անընդհատ հոսանքի հետևանքով Հայաստանի գործազրկությունը կրում է մշտական և տեղական բնույթ, մանավանդ վոչ վորակյալ ֆիզիքական և մտավոր ուժի նկատմամբ:



1. Գտնելով, վոր գործազրկության դեմ պայքարելու նպատակով աշխատանքային միջնորդ մարմինների գործունեությունը յեղել է թույլ և նպատակ ունենալով ուժեղացնելու բանվորական ուժի պահանջը, անհրաժեշտ համարել կազմակերպել հատուկ գործակալություն, տնտեսական մարմիններին հարկավոր բանվորական ուժ տրամադրելու վերաբերյալ պայմանագրեր կնքելու, գործազրկությունը էքսպերտիզացիայի յենթարկելու՝ լուրջ աշխուժություն դարձնելով արտադրությունների և հիմնարկների մեջ գործազուրկներին գործնական փորձառության յենթարկելով:

2. Գտնելով, վոր միջնորդ մարմինների կողմից, շնորհիվ նրանց սակավաթիվ լինելուն չի ընդգրկված Հանրապետության մեջ գոյություն ունեցող ամբողջ գործազրկությունը՝ անհրաժեշտ համարել գործազուրկների կուտակման վայրերում, ինչպես և գյուղական խոշոր կենտրոններում ցուցակագրման կայանների ցանց ստեղծելը:

3. Գտնելով, վոր 1924—25 թ. թ. ընթացքում գործազուրկներին աշխատանքային օգնություն հասցնելու տարբերպում կատարված է վորոշ նվաճումներ, համագումարն անհրաժեշտ է համարում այդ աշխատանքների շարունակելը և առաջարկում է իբրև հիմնական միջոցներ հետևյալները՝ ա) Աշխկոլլեկտիվների ցանցի զարգացումը և բ) Հասարակական աշխատանքներ կազմակերպելը:

Հասարակական աշխատանքները հարկավոր է կատարել գործազուրկների կուտակման վայրերում, ինչպես և այն վայրերում, վորտեղից բռնկվում է սակավահող գյուղացիների հոսանքը: Ի նկատի ունենալով մտավոր և գրասենյակային աշխատավորության գործազրկության տեղական բնույթը՝ համագումարն անհրաժեշտ է համարում հիշյալ խմբակների համար հասարակական աշխատանքներ կազմակերպել:

4. Գտնելով, վոր համեմատաբար 1924—25 թ. թ. սույն 25—26 թ. թ. համար հատկացրած գումարը գործազրկության դեմ պայքարելու (1924-25 թ.—78.000 ռ., 25—26 թ.—45.000 ռուբլի) չափազանց քիչ է, Համագումարը հանձնարարում է Աշխժողկոմատին ՀԱՄԽ-ի հետ միասին հարց բարձրացնել լրացուցիչ գումարներ ստանալու ուղղությամբ: Միաժամանակ գտնել անհրաժեշտ Սոցապահովագրական մարմինների նյութական օժանդակության ուժեղացումն:

5. Գտնելով, վոր աշխատանքային օգնության ուղղությամբ գործազուրկ դեռահասների և կանանց վերաբերյալ տարված է վոչ բավարար աշխատանք, անհրաժեշտ համարել՝

ա) Աշխատանքային կոլլեկտիվների մեջ ընդունել կանանց հնարավոր շատ, տալով նրանց համապատասխան արտոնություններ:

բ) Կանանց և դեռահասներին հասարակական թեթև աշխատանքներում տեղավորել:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI.-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

գ) Գործազուրկ դեռահասներին ըստ կարելվույն տեղավորել արտադրական կոլեկտիվներում:

դ) Խմբակային, անհատական, գրասենյակա-առևտրական աշակերտությունը ուժեղացնել:

6. Գտնելով, վոր վորակյալ բանվորական ուժի պակասության պատճառով հնարավոր չի լինում բավարարել մեր արդյունաբերության պահանջը, անհրաժեշտ համարել ամենալուրջ ուշադրություն դարձնել թե ֆիզիքական և թե մտավոր աշխատանքի վորակյալ բանվորական ուժ ուսուցանելու և վերաուսուցանելու հարցին, տանելով այդպիսի աշխատանքներ Աշխբորսաներում ցուցակագրված գործազուրկների նկատմամբ:

## 2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

1. Ի նկատի առնելով Աշխատանքի պաշտպանության իրավական նորմաների կիրառման ասպարեզում ունեցած նվաճումները, այլև Հայաստանի արդյունաբերության և տնտեսական զարգացման հետևանքով նշվող նյութական հնարավորությունները՝ անհրաժեշտ գտնել Աշխպաշտպանության ուշադրության խոշոր մասը կենտրոնացնել՝

ա) Աշխատանքի պաշտպանության աշխատավորների թվի ավելացման վրա, մանավորապես գյուղատնտեսական տեսուչների, վորովհետև մեկ գյուղատնտեսական տեսչի միջոցով հնարավոր չե իրագործել հնարավորության սահմաններում աշխատող գյուղատնտեսական բանվորության աշխատանքի պաշտպանություն: Այն վայրերում, ուր կան գյուղատնտեսական աշխտեսուչներ, միջոցներ ձեռք առնել ուսումնասիրելու բատրակների աշխ. վարձի պայմանները:

բ) Հաշվի առնելով Աշխտեսուչների աշխատանքների բազմազան և բարդ բնույթը միաժամանակ և Աշխօրենսդրության հետ ծանոթանալու համար անհրաժեշտ յերկարատև ժամանակը,—Աշխտեսուչների հաճախակի փոփոխություններին վերջ տալ: Աշխտեսուչների թեկնածությունն առաջադրելիս ի նկատի ունենալ թեկնածուների վորակը և արհեստակցական ստաժը: Ի նկատի ունենալով աշխտեսուչների ծանրաբեռնված լինելը՝ անհրաժեշտ գտնել նրանց տեխնիքական աշխատակիցներ տալ:

2. Մատնանշելով արտաժամյա աշխատանքի նկատմամբ կատարված շեղումները, Համագումարն անհրաժեշտ և համարում Աշխտեսչության ուշադրությունը հրավիրել այդ աշխատանքների խիստ կրճատման վրա:

3. Ի նկատի ունենալով այն հանգամանքը, վոր դժբախտ պատահարների քանակն ավելացել է, առանձին ուշադրություն դարձնել թե այդպիսիների ամրագրման և թե մեղավոր անձանց կամ կազմակերպու-



թյուններին պատասխանատվության յենթարկելու վրա: Դժբախտ պատահարների դեմ թե լրիվ և թե ժամանակին միջոցներ ձեռք առնելու համար լուրջ ուշադրություն դարձնել նախազգուշական հսկողության վրա: Նախազգուշական հսկողությունը խախտողներին անպայմանորեն պատասխանատվության հրավիրել: Նախազգուշական հսկողությունը ուժեղացնելու համար և դժբախտ պատահարների դեմ պայքարելու նպատակով, արդյունաբերական խոշորագույն ձեռնարկներում անհրաժեշտ գտնել անվտանգության տեխնիկայի համար պատասխանատու բարձրագույն տեխնիքական հատուկ պաշտոնյաներ ունենալ:

4. Գտնելով, վոր դեռահասների բրոնյան լիապես չի կիրառված՝ կտրուկ միջոցներ ձեռք առնել այդ ուղղությամբ: Այն ձեռնարկներում կամ արտադրություններում, ուր չի վորոշված բրոնյայի նորման, այդպիսին վորոշել:

5. Աշխատանքի պաշտպանության հետևանքով ձեռնարկների տարրական թերությունների վերացնելու հետ միասին, աշխատել կիրառել նաև ավելի խոշոր պահանջներ, ինչպիսին են արտադրական գործողությունների ռացիոնալիզացիան, շենքերի հիմնական վերակառուցումն, լուսավորության ուժեղացումն, ողափոխության հարմարությունների կարգավորումն և այլն:

6. Բանվորների բնակարանների մասսայական սանիտարական հետազոտության նպատակով համաձայնության գալ Առժողկոմատի հետ: Նպատակ ունենալով բանվորության պրոֆհիվանդությունների պատճառները կանխելը և արտադրության վնասակար ազդակները ուսումնասիրելը՝ անհրաժեշտ գտնել բանվորների առողջության պարբերական քննություններ կազմակերպելը:

7. Ուժեղացնել կապը արհեստակցական մարմինների, ինչպես և աշխատանքի պաշտպանության տեղական բջիջների հետ՝ մասնակից դարձնելով նրանց խորհրդակցություններին, հետազոտումներին և այլն. Միութենական մարմիններում պարբերաբար հաշվետվական զեկուցումներ անել Աշխպաշտպանության գործունեության մասին, ինչպես և զեկուցանել բանվորական ժողովներում և կոնֆերանսներում թե կատարած աշխատանքների և թե կիրառած բարեփոխությունների մասին: Միաժամանակ հրատարակել Աշխպաշտպանության իմաստը և գործունեությունն արտահայտող պլակատներ:

8. Աշխատանքի պաշտպանության մարմինների ուշադրությունը դարձնել շինարարական աշխատանքներում գրավված սեզոնային և ժամանակավոր բանվորների աշխպայմանների վրա:

9. Արտադրությունների վնասակարությունների գիտական ուսումնասիրությունը հնարավոր դարձնելու և աշխատանքի առողջացման ուղղությամբ առաջադրվող միջոցները գիտականորեն հիմնավորելու համար կազմակերպել համապատասխան լաբորատորիա, իսկ բանվորա-

կան մասսայի մեջ աշխատանքի առողջացման և առհասարակ աշխատանքի պաշտպանության գաղափարների հաջող տարածման համար հիմք դնել «Աշխատանքի պաշտպանության Թանգարանի»:

10. «Ժամանակավոր կանոնները», վորոնք կանոնավորում են բատրակների աշխատանքի պայմանները, պետք է գյուղացիության մեջ ավելի ևս ժողովրդականացնել:

11. Հատուկ նշանակություն տալով անվտանգության տեխնիկային և ձեռնարկների ու գործարանների վերասարքավորման գործին՝ անհրաժեշտ է պահանջ դնել լեռնային հսկողությունը առանձնացնել Ժողտնտխորհի Լեռնային բաժնից և Աշխժողկոմատին լուրջ ուշադրություն դարձնել լեռնային հսկողության գործի ուժեղացման համար և նրան դցելու իր ազդեցության տակ:

## 3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

1. Գտնել, վոր Սոցապմարմինները թոշակների և նպաստների նորմաների ավելացման գործում կատարել են ուժեղ աշխատանք. նպատակահարմար համարել այդ քաղաքականությունը շարունակել նաև ապագայում՝ հաշվի առնելով սոցապմարմինների ռեալ հնարավորությունները:

2. Ի նկատի ունենալով այն հանգամանքը, վոր վերջին ժամանակներս Սոցապվարչության ապահովագրական տոկոսները հիմնարկ-ձեռնարկների կողմից մուծվում են ուշ ժամանակին և վորի շնորհիվ գոյացել է խոշոր պարտք՝ անհրաժեշտ դնել կտրուկ միջոցներ ձեռք առնել այդ յերևույթին վերջ տալու համար: Այդ նպատակով ուժեղանել այդ յերևույթին վերջ տալու նպատակով: Այդ նպատակով ուժեղացնել արհմիությունների կողմից ոգնության հնարավոր միջոցները՝ սոցմուծումները 100 տոկոսով գանձելու խնդրում:

3. Միջոցներ ձեռք առնել Սոցապահովագրական ստանալիքները ֆինժողկոմատից ստանալ, ինչպես և աշխատավարձը, առաջին հերթին:

4. Գտնելով, վոր թե սանատորա-կուրորտային բժշկության և թե ապահովագրվածներին հանգստյան տներ ուղարկելու ասպարեզում Սոցապմարմիններն ունեցել են խոշոր նվաճումներ թե 1923–24 թ. թ. և թե 24–25 թ., Համագումարն անհրաժեշտ է գտնում հաջորդ սեզոնում տանել նույնանման աշխատանք և ըստ դրամական միջոցների ուժեղացնել աշխատանքը թե սանատորական-կուրորտային, թե բժշկության նկատմամբ և թե հանգստյան տների մահճակալների քանակն ավելացնելու նկատմամբ:

5. Գտնելով, վոր ապահովագրական լուսավորությունը խոշորագույն ազդակ է մասսաների կուլտուրական մակարդակի բարձրացմանը և նրանց զարգացմանը և ի նկատի ունենալով, վոր այդ ասպարեզում տարվել է զգալի աշխատանք, նպատակահարմար գտնել Սոցապմարմինների նյութական ոժանդակության ուժեղացումն և այդ աշխատանքները տանել պրոֆ-մարմինների սերտ մասնակցությամբ:



6. Գտնել, վոր Սոցապմարմինների կազմակերպչական ծախսերը հանդեպ անցյալի, բավականաչափ կրճատվել են. համարել անհրաժեշտ այդ ծախսերի հետագա կրճատումները:

7. Ընդունելով, վոր ապահովագրվածների հասցրված բուժօգնության գործում Սոցապմարմիններն ունեցել են բավականաչափ հաջողություն, բայց նայած այդ հանգամանքին կան վորոշ բացեր, հարկավոր է վերջիններիս շուրջը բևեռել Առժողկոմատի ուշադրությունը. մանավորապես Համագումարն անհրաժեշտ է համարում պրոֆիլակտիկայի նկատմամբ կազմակերպել պալարախտային և վեներիքական դիսպանսերներ, գիշերային սանատորիաներ և խրոնիկ թոքախտավորների համար հատուկ հիվանդանոց:

8. Բժշկական ոգնության գործում մեծ նշանակություն ունի բանբուժների կազմակերպումն, ուստի համագումարը միանգամայն անհրաժեշտ է գտնում բան-բուժների գործունեության ուժեղացումն արհեստակցական մարմինների ամենալայն աջակցությամբ, ինչպես և ապահովագրական խորհրդակցությունների կենդանացումով, վորի համար հարկավոր է ապահովագրական խորհրդակցություններին մասնակից դարձնել այնպիսի փորձառու ընկերների, վորոնք իրենց ակտիվ մասնակցությամբ կկարողանան բան-բուժների կազմակերպության հետ կապ ունեցող հարցերին և բուժօգնության ֆոնդի նպատակահարմար ոգտագործմանը տալ ցանկալի ուղղություն:

9. Անհրաժեշտ համարել ապահովագրված գործազուրկների քանակն ավելացնել, ինչպես և գործազրկության նպաստ ստանալու իրավունքի ստաժը իջեցնել:

## 4. ՏԱՐԻՖ-ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

1. Ակնհայտ համարել, վոր հիմնարկ-ձեռնարկների կողմից չի դարձվում բավականին լուրջ ուշադրություն հաշտարար ատյանների և ԳԿՀ-ների աշխատանքներին, վորն ապացուցվում է այն հանգամանքով, վոր վերոհիշյալ մարմինների նիստերին իրենց ներկայացուցիչները ժամանակին չեն ուղարկում կամ ուղարկելուց հետո նրանց մասնակցությամբ կայացրած վորոշումները չեն կատարում և այլն, վորի հետևանքով Գ. Կ. Հ.-ներում և թե հաշտարար ատյաններում գործերի ընթացքը դանդաղեցվում է: Անհրաժեշտ համարել համապատասխան մարմինների միջոցով այդպիսիների ուշադրությունը դրավել այդ բացասական յերևույթի վերացման վրա: ԳԿՀ-ների վորոշումները կոնֆլիկտային հարցերի նկատմամբ բովանդակալից դարձնելու նպատակով անհրաժեշտ համարել շահագրգռված բանվորներին և ծառայողներին, բացատրություններ տալու համար, ԳԿՀ-ներ նիստերին հրավիրելը: Շնորհիվ այն հանգամանքին, վոր հաճախ ԳԿՀ-ները քննության են առնում այնպիսի գործեր, վորոնք

իրենց չեն վերաբերում և այդպիսով ծանրաբեռնում են իրենց, միաժամանակ վերցնելով իրենց վրա վարչությունների պատասխանատվության մի մասը, համագումարն անհրաժեշտ է գտնում առաջարկել ԳԿՀ-ներին այդպիսի աշխատանքներից խուսափել:

2. Հաջորդ տնտեսական տարվա սկզբից պետական ծառայողների աշխատանքի պայմանների կարգավորումն (նորմիրովկա) —պաշտոնների աշխատավարձի ունիֆիկացիայի միջոցով գտնել նպատակահարմար և կարևոր: Սակայն այդ կարգավորումն ոչ մի դեպքում չպիտի առաջացնի աշխատավարձի նոմինալ չափի իջեցումն:

3. Ակնհայտ համարելով այն հանգամանքը, վոր Աշխորենսդրությամբ և հավաքական պայմանագրերով սահմանված ժամկետներին աշխատավարձի վճարումները կատարելու խնդրում տարված է լուրջ աշխատանք, վորի հետևանքները զգալի յեն, գտնել անհրաժեշտ Աշխժողկոմատի մարմինների ուշադրությունը գրավել այդ ուղղությամբ տարվող հսկողության ուժեղացման վրա:

4. Ի նկատի ունենալով, վոր գյուղխորհուրդներին կից հաշտարար ատյանները դեռևս բավարար չափով չեն գործում, անհրաժեշտ համարել, վոր այդ ատյանները ավելի լավ ղեկավարվեն Աշխժողկոմատի կողմից:

5. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.

1. Ի նկատի ունենալով ՀԽՍՀ գլխավոր քաղաքների, ինչպես և յերկաթգծի բանվորության բնակարանային սուր ճգնաժամը, վորպիսին որստորե ուժեղանում և սպառնում է ընդգրկել ավելի մեծ քանակությամբ աշխատավորություն, զրկելով նրանց աշխատունակությունից, վորը չի կարող չանդրադառնալ աշխատանքի արտադրողականության վրա, համարել անհրաժեշտ համապատասխան մարմինների ոժանդակությամբ միջոցներ ձեռք առնել, թե կոոպերատիվ և թե կոմմունալ ու արդյունաբերական շինարարության համար անհրաժեշտ վարկ ստանալու համար:

2. Հայտնաբերված համարելով բնակարանային շինարարական կոոպերացիայի թվական զարգացումն և այդպիսիների մեջ ակտիվ և գործոն աշխատավորներ ընդունելու անհրաժեշտությունը, համապատասխան մարմինների ուշադրությունը հրավիրել բնակարանային կոոպերատիվ շինարարության զարգացման համար յերկարատև արտոնյալ վարկեր բաց թողնելու խնդրի վրա:



# ԲԱՆԱՁԵՎ

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ԴՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Համահայաստանյան արհեստակցական միությունների 4-րդ համագումարը լսելով ընկ. Հովսեփ Պողոսյանի զեկուցումը «Ժողովրդական տնտեսության ներկա դրության և նրա զարգացման հեռանկարների մասին»՝ արձանագրում է գյուղատնտեսության և արդյունաբերության ասպարեզներում տեղի ունեցած ընդհանուր տնտեսական վերելքը, վորի հետևանքով ընթացիկ տարին պիտի համարել ժողովրդական տնտեսության վերականգնման վերջին տարին: Ընդգծելով, վոր ժողովրդական տնտեսության զարգացումը ընթացել է սոցիալիստական շինարարության գծով, իսկ մյուս կողմից ժողովրդական տնտեսության հետագա զարգացումը սոցիալիստական շինարարության ուղիներով ապահովելու համար, համագումարը անհրաժեշտ է գտնում կիրառելու կյանքում հետևյալը.

1. Գյուղատնտեսության բնագավառում շարունակել գյուղացիական տնտեսության ինտենսիֆիկացիան, մանավորապես թանգարժեք տեխնիկական կուլտուրաների զարգացման գործում, ինչպիսին են՝ բամբակագործությունը, այգեգործությունը, շերամապահությունը, ծխախոտի և այլ ճյուղերի զարգացումը: Այս աշխատանքը ռեալ դարձնելու համար, վորպես կարևոր և հիմնական աշխատանք համարել յերկրի ջրային շինարարության հարցը և միանգամայն ժամանակին ընդունելի համարել ջրային շինարարության 5-ամյա պերսպեկտիվ ծրագիրը:

2. Անասնապահությունը գյուղացիության և պետության համար տնտեսապես ոգտավետ դարձնելու համար դնել այն ռացիոնալ ոգտագործման հիմքերի վրա, համարելով, վոր անասնապահությունը խոշորագույն նշանակություն ունի Խորհրդային Հայաստանի գյուղատնտեսության և գոյություն ունեցող ու նոր ստեղծվող արդյունաբերության համար, ինչպես և նրա ապագա հեռանկարների համար:

3. Գյուղատնտեսական կոոպերացիայի դերը համարելով մեծ՝ համարել անհրաժեշտ, վորպեսզի գյուղատնտեսական կոոպերացիայի համապատասխան մարմինները ել ավելի ուժեղացնեն իրենց աշխատանքը գյուղատնտեսական ապրանքային հում նյութերի վերամշակման, ինչպես և նրանց ռեալիզացիայի գործը թե յերկրի ներսում և թե դուրսը կազմակերպելու համար, համագործակցելով այդ ասպարեզում այլ կոոպերատիվ ու պետական հիմնարկների հետ:

4. Արդյունաբերության ասպարիզում համագումարը ամբողջովին միանալով Խորհրդային Հայաստանի ինդուստրիալիզացիայի յենթարկելու քաղաքականությանը, վորպես առաջնակարգ հարց առաջադրում է լեռնային արդյունաբերության լրիվ վերականգնումը և նրա լայնացումը, ինչպես և նոր ստեղծվող տեքստիլ արդյունաբերության ու այլ արդյունաբերական ճյուղերի զարգացման ապահովումը:

5. Արդյունաբերության ներկա և մոտ ապագայի կարիքը վորակյալ բանվորական ուժով և հարկավոր քանակությամբ մասնագետներով բավարարելու համար, հրավիրել համապատասխան մարմինների լուրջ ուշադրությունը այդ կադրերը պատրաստելու համար:

6. Միաժամանակ համագումարն անհրաժեշտ է համարում համապատասխան մարմինների ուշադրությունը դարձնել գների իջեցման քաղաքականությունը կիրառելու խնդրի վրա և գտնում է անհրաժեշտ ձեռք առնել բոլոր հնարավոր միջոցները, պահպանելու ներկա ռեալ աշխատավարձը:

Համագումարը գտնելով միանգամայն ժամանակին խնայողության ռեժիմի հայտարարումը, հրահանգում է պրոֆկազմակերպություններին ամենալուրջ ուշադրությունը դարձնել այդ հարցի կիրառման վրա, ինչպես և արտադրողականության բարձրացման, աշխատանքի խիստ դիսցիպլինա ստեղծելու և առհասարակ կիրառելու ամենայն լրջությամբ ու զգուշությամբ այն բոլոր միջոցները, վորոնք հետապնդում են յերկրի ներսում նոր կուտակումներ առաջացնելու, պլանաչափ կերպով ժողովրդական տնտեսության սոցիալիստական շինարարության ապագա ընթացքն ապահովելու համար:

Խնայողությունը, հաշվառումն ու պլանային աշխատանքը պետք դրվեն մոտ տարիների աշխատանքի հիմքում, վորպես հիմնական ուղեցույց:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
Ереван, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



# ՑՈՒՑԱԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՈՒ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 4-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

1. Ազատյան Հայկ,
2. Ազիզյան Հարություն,
3. Ավագյան Գրիգոր,
4. Ավետիսյան Համո,
5. Ավետիսյան Սարգիս,
6. Այվազյան Վաղինակ,
7. Աստվածատրյան Սամսոն,
8. Բակունց Յերեմիա,
9. Բաղդասարյան Համո,
10. Գաբրիելյան Հարություն,
11. Գալոյան Աղասի,
12. Գողթունի Գևորգ,
13. Գրիգորյան Վաղինակ,
14. Գևորգյան Խուրշուդ,
15. Դեմիրճյան Խաչիկ,
16. Դեմիրճյան Հակոբ,
17. Դիլանյան Հակոբ,
18. Թովմասյան Մարջանիկ,
19. Թագի Նագի-ոգլի,
20. Խաջամիրյան Յերվանդ,
21. Ծովյան Կարապետ,
22. Կուզնեցով Պյոտր,
23. Հովսեփյան Խորեն,
24. Մինասյան Հովհաննես,
25. Մխիթարյան Վերգուշ,
26. Մուրադյան Հարություն,
27. Մուրադյան Հմայակ,
28. Շահգելդյան Արամ,
29. Շեստակով Մակար,
30. Պետրոսյան Հովհաննես,
31. Պողոսյան Անուշավան,
32. Պողոսյան Գուրգեն,
33. Վոսկանյան Աշոտ,
34. Վյուգա,
35. Քեչիկեզյան Վառվառա,

Թեկնածուներ

1. Արովյան Գևորգ,
2. Ավագյան Աղասի,
3. Ամբաղյան Վահան,
4. Դուրինյան Աշոտ,
5. Ջաքարյան Թեմզա,
6. Կիլոյան Հարություն,
7. Ծատուրյան Գևորգ,
8. Հովհաննիսյան Արշակ,
9. Սահակյան Դանիել,
10. Սաֆարյան Վաղինակ,
11. Տիրատուրյան Նիկողայոս:

### ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ

1. Բաղդասարյան Վարդան,
2. Մանուկյան Մանուկ,
3. Քեչյան Մեսրոպ,

Թեկնածուներ

1. Ղամբարյան Յերվանդ,
2. Վոսկերչյան Նիկողայոս,

# ՑՈՒՑԱԿ

## ՀԱՄԽ-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՅԵՎ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՎԱԾ ՊԼԵՆՈՒՄԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻՆ 1926 Թ. ԱՊՐԻԼԻ 29-ԻՆ

Նախ. անդամներ

1. Ազատյան Հայկ,
2. Բակունց Յերեմյա,
3. Բաղդասարյան Համո,
4. Գողթունի Գևորգ,
5. Դիլանյան Հմայակ,
6. Կուզնեցով Պյոտր,
7. Հովսեփյան Խորեն,
8. Շահգելդյան Արամ,
9. Շեստակով Մակար,
10. Պետրոսյան Հովհաննես,
11. Պողոսյան Գուրգեն,

Թեկնածուներ

1. Գալոյան Աղասի,
3. Քեչիկեզյան Վառվառա:
2. Մուրադյան Հարություն,

ՀՀ Ազգային գրադարան
NL0205225

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.